

355.51

Ծ-98

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԱՅԻՆ
ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԵՏ
ՏԱՐՎՈՂ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

1931—32 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶՄԵՌՆԱԹԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1931

15 MAY 2013

1 MAR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ

355.51

8-98

W

ԾՐԱԳԻՐ

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՐԲԱՅԻՆ
ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԱԿԱԶՄԻ ՇԵՏ
ՏԱՐՎՈՂ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՈՐԱՊՈՍՈՒՆՔՆԵՐԻ

1990

1931—32 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՁՄԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ



10443-54

ԲԳԿԲ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Պետերատի տպարան
Դրավիտ 6931 (Բ)
Պատվեր 5910
Տիրաժ 800

Հ Ր Ա Մ Ա Ն

ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑՈՒԿԱՆ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 18

«3» հոկտեմբերի—1931 թիվ
Փաղ. Մոսկվա

Հայտարարում եմ 1931—32 ուսումնական
ուարվա ձմեռային շրջանի համար ժամկե-
տային ծառայություն չարժային և կրտսեր
սեռականության հետ քաղաքական պարագայում
ներ առնչվածները ծրագրերը և կազմակերպ-
չական-մեթոդական ցուցումները:

Ծրագրերի առնչված սկսել 1931 թվի դեկ-
տեմբեր 1-ից: ԲԳԿԲ Քաղվարչության Ա-
շխարհային բաժնին՝ — մինչև այդ ժամկետը
լորամասերն ապահովել դասադրվածքով և
նոնարկներով:

ԲԳԿԲ Քաղվարչության պետի տեղակալ ԲՈՒԼԻՆ

«Հաստատվում է»

Յ՝X—1931 թ.

ԲԳԿԲ Քաղկալային պետի

տեղակալ Ա. Բուլին

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ ԱՅՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Կարմիր բանակայինների կողմից քաղաքական պարապմունքների լավագույն յուրացումն ապահովելու նպատակով, 31—32 թվի ձմեռվա քաղաքարապմունքների ծրագիրը կառուցվում է հետևյալ կերպ—

ա) Առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների հետ: Առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների հետ տարվող քաղաքարապմունքների ծրագիրը տալիս է հիմնական մենիմումն այն դեպքերի, վերոնց անհրաժեշտ են կարմիր բանակայինին հասկանալու համար միջազգային և ներքին դրությունը, սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները, յերկրի պաշտպանությունն ու կարմիր բանակը, և բաժանվում է յերեք կուրսի— սկզբնական կուրս (4 թեմա— հիմնական սեղեկություններ կարմիր բանակի մասին,

երա դասակարգային ելույթյան և խնդիրներ— ռի մասին, նրա մարտական պատմություն և տրադիցիաների մասին)։ Ընդհանուր քաղաքական կուրս (8 թեմա— կուսակցության փոխական շարժման հիմնական հարցերը)։ Ուսովա—քաղաքական կուրս (4 թեմա— ապագա պատերազմի բնույթի մասին, հասկանալու հակառակորդների մասին, կարմիր բանակայինների խնդիրների մասին)։ Մարտական պարապմունք: Բացի այդ, առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների հետ արտաժողովային հատուկ թեմաների կարգով մշակվում են ընթացիկ քաղաքականության հարցերը և մարտական պատրաստության կոնկրետ հարցերը:

Առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների հետ քաղաքական պարապմունքներն անց են կացվում հնգօրյակում 2 անգամ, 2-ական ժամ: Յ կամ 4 ժամյա պարապմունքներ կադմակերպվելն արգելվում է: Սկզբնական կուրսը պետք է ավարտվի մինչև 1932 թվի հունվարի 15-ը, ընդհանուր քաղաքական կուրսը— մինչև 1932 թվի ապրիլի 1-ը, ուսովա—քաղաքական կուրսը— մեծության չըջանի վերջին:

բ) Գնդային դպրոցների և վարժակա
գումարտակների ուսանողների հետ: Գնդա-
յին դպրոցների և վարժական գումարտակ-
ների ուսանողների հետ տարվող քաղաքա-
կան պարապմունքների և նրանց անցկացման
կարգը նույնն են, ինչ վոր առաջին տարվա
ծառայության բոլոր կարմիր բանակային
ների հետ տարվողը: Ուսուցման պլանը
կազմվում է, հաշվի առնելով ուսանողի
կրտսեր հրամանատարի գերին պատրաս-
տելու խնդիրները, դաստիարակելով նրա
մեջ գրքի և թերթի հետ ինքնուրույն աշխա-
տելու սովորները, կարմիր բանակայինների
հետ քաղաքական աշխատանք տանելու սո-
վորներ: Համապատասխան ձևով կառուց-
վում է և պարապմունքի մեթոդիկան:

գ) Ցերկրորդ տարվա ծառայության կար-
միր բանակայինների հետ: Ընթացիկ տա-
րում ՊՈՒՌ-ը նպատակահարմար է գտնում
քաղաքապամունքների միջոցով անցկացնել
կոլխոզային կադրերի հատուկ պատրաս-
տության (ինչպես այդ յեղել է անցյալ տա-
րի): Հին ծառայության կարմիր բանակա-
յինների քաղաքական պատրաստությանը
խնդիր ունի՝ պատրաստել նրանց կրտսեր
հրամանատարների գերի համար, — նրանց
հետ ընթացիկ քաղաքականության և մար-

պատրաստության հարցերը խո-
ղարվելով մշակելու հիման վրա, ամ-
ենակալ լինելով զինվորների այն շը-
րանքը, վորը նրանք ստացել են ուսուց-
ման 1-ին տարվա ընթացքում, պատվաստել
հրամանատարի համար ան-
հրաժեշտ քաղաքատանքի սովորները:
Յուրաքանչյուր տասնորյակը մի անգամ
ՊՈՒՌ-ի Ագիտպրոպը «Բայեվայա Պոդգա-
տովկա» թերթի և չրջանային թերթերի մի-
ջոցով մեթոդական մշակումներ կտա ըն-
թացիկ քաղաքականության այն հիմնական
հարցերի մասին, վորոնք պետք է քաղա-
քապամունքների կարգով մշակվեն հին ծա-
ռայության կարմիր բանակայինների հետ:
Բացի այդ, մինչև հունվարի 15-ը 2-րդ
տարվա կարմիր բանակայինների հետ
կրկնվում են այն ծրագրային հարցերը, վո-
րոնք թույլ են յուրացված յեղել առաջին
տարվա ուսուցման ընթացքում: Այդ հար-
ցերի ցուցակը նշվում է քաղաքապամունք-
ների աշխանային տեսչական ստուգումների
հանրապետարներում: Ապրիլի 1-ից հին
ծառայության կարմիր բանակայինների հետ
ընթացիկ քաղաքականության թեմաներից
զատ մշակվում է պաշտպանության աշխա-
տանքների կուրսը (3 թեմա):

Հին ծառայութեան կարմիր բանակայինների հետ տարվող քաղաքարարմունքների թեմաների ցանկն ու պլանը կազմվում են զորամասերի կոմիտաների կողմից՝ դիվիզիաների Գաղաթիւնների ցուցումների և դրեկտիվների հիման վրա:

Հին ծառայողների հետ քաղաքարարմունքներն անց են կացվում 2-ից 4 անգամ տասնորյակում, 2-ական ժամ:

դ) Կարմիր նավատորմայինների հետ: Սուսնի տարվա ծառայութեան կարմիր նավատորմայինների հետ անց է կացվում սկզբնական կուրսը (մինչև հունվարի 1-ը) և ընդհանուր-քաղաքական կուրսը (մինչև ձմեռային շրջանի վերջը)՝ 2-րդ և 3-րդ տարվա ծառայութեան կարմիր նավատորմայինների հետ նավատորմի Գաղվարչութունների կողմից վերամշակված և լրացված, նավատորմի պայմանների համար զործադրելի ռազմա-ֆազաֆական կուրսը (ՊՈՒՌ-ի Ազիտուրույի հատուկ ցուցումներով): Մինչև հունվարի 15-ն ընկած ժամանակամիջոցը հատկացվում է ծրագրի թույլ տրացված հարցերի մշակմանը (թեմաների ցանկը նշվում է քաղաքարարմունքների աշխատանքի ստուգումների հանրադրմանը): 4-րդ տարվա ծառայութեան կարմիր

նավատորմայինների հետ տարվող քաղաքարարմունքների ծրագիրը կազմվում է մինչև հիմունքներով, ինչ վոր 2-րդ տարվա ծառայութեան կարմիր նավատորմայինների համար:

Բոլոր տարիների ծառայութեան կարմիր նավատորմայինների հետ քաղաքարարմունքները տարվում են մի անգամ հնգորյակում 3-ական ժամ:

ե) Մեքենայացված և տեխնիկական գործառնների կարմիր բանակայինների հետ: Մեքենայացված և տեխնիկական գործառնում քաղաքարարմունքների ուսումնական պլանը կազմվում է հաշվի առնելով զորամասերի բոլոր առանձնահատկությունները և նրանց բանվորական կազմը. 1) մեծ ժամանակ է հատկացված տեխնիկայի հարցերի հետ կապված թեմաների մշակմանը. 2) ընդլայնվում է այն հարցերի ու թեմաների մշակման համար իրավող ժամանակը, վերոնք կապված են արդյունաբերութեան աշխատանքի հետ (սոցիալիստական արդյունաբերութեանը, յերկրի և սոցարդյունաբերութեան պաշտպանութեանը և այլն). 3) ամբողջ ծրագիրը մշակվում է ավելի խորացրած ձևով, հատկապես «Տնտեսութեան յերկու սխտեմներ», «Պրոլետարիատի

դիկտատուերան», «Համհ(բ)», «Կոմիտեան», «Խմսերիալիզմը և պատերազմների լիակատարական-քաղաքական մակարդակը» թեմաները. 4) ընթացիկ թեմաների կրկնողական-քաղաքական մակարդակը: Ուսումնական պլանը կազմելիս, զորաբանվորական կադմը և մարտական պատմասի կոմիտայը պետք է ժամանակ նախա-րատու թյան խնդիրներն այդ զորամասերի ընթացիկ թեմաների, կրկնողական և ստուգողական պարապմունքների համար:

Ծրագիրն անցնելու կարգը մեքենայացված և տեխնիկական զորամասերում նույնն է, ինչ վոր ԲԳԽԲ բոլոր զորամասերում:

2. Սահմանվում է զորամասերում քաղաքապմունքների պլանավորման հետևյալ կարգը. —

ա) Պոռո-ի կողմից վորոշված՝ առանձին կուրսերն անցնելու ժամանակամիջոցների և քաղաքական պարապմունքների աշխատանքի ստուգումների արդյունքների հիման վրա զորամասի կոմիտայն ուսումնական տարվա նախորդյան կադմում է ձևադրվում ընթացիկ քաղաքապմունքների որիեմտիր ուսումնական պլան (նորեկ կարմիր բանակայինների, հին ծառայողների, կրտսեր հրամկադմի և այլն համար), նշելով առանձին թեմաների մշակման մոտավոր ժամա-նակամիջոցը: Յուրաքանչյուր թեմայի հա-մար պարապմունքների մոտավոր քանակը նշվում է, հաշվի առնելով թեմաների ծա-

բ) Յուրաքանչյուր ամիս — ուսումնա-կան պլանի և կարմիր բանակայինների յու-րացման հաշվառման հիման վրա — կոմի-տայը կադմում է քաղաքական պարապմունքների ամսական պլան, ներառնելով այն քաղաքապմունքների ընդհանուր գնդային պլանում: Քաղաքապմունքների ամսական պլանում նշվում է. — 1) ծրագրային և ըն-թացիկ թեմաների ցանկը, — վորոնք պետք է մշակվեն ամեն մի ամսվա ընթացքում. 2) այն ժամկետները, մինչև յերբ պետք է ավարտեն այդ թեմաների մշակումը. 3) ստուգողական պարապմունքներն աշխատ-նելու ժամկետներն ու կարգը. 4) խմբակ-վորների սեմինարների պարապմունքների թեմաներն ու որերը: Հնարավորության չափ ամսական պլանը պետք է լինի շերտավոր-ված, հարմարեցված գնդի առանձին ստու-րաբաժանումներին.

գ) ամսական պլանի հիման վրա վաչտի քաղղեկը խմբակավարների հետ միասին

բաղադրապատկանները յուրաքանչյուր խնդրակի համար առանձին կաղմում ե գեղեցիկ դաշին որադրացուցակ, հաշվի առնելով յուրաքանչյուր խմբակի առանձնահատկություններն ու յուրացումը: Քաղղեկին իրավունք ե տրվում զորամասի կոմիտարի ցուցումով ժամկետների սահմաններում, նայա կարմիր բանակայինների կուլտուրական բաղադրական մակարդակին ե յուրացմանը տվելացնել կամ պակասեցնել այս կամ այլ խմբակում, այս կամ այն թեմայի մշակման ժամանակամիջոցը, կաղմակներ պահելը և պարապմունքներ ե այլն:

2. ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆԻՏԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄՆ ՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՆ

3. Նորմաներ, վորոնց համար պետք ե պայքարել—

ա) չպետք ե լինի վաղ մի կարմիր բանակային, վորը բավարար չափով յուրացրած չլինի բաղադրական պարապմունքների ծրագիրը:

բ) բոլոր կոմունիստները, կոմյերիտականները, հարվածայինները պետք ե քաղաքապատկանների համար «լավ» գնահատական ձեռք բերեն:

Մեքենայացված ե տեխնիկական զորա-

մասերում, գնդային դպրոցներում ե վարժական գումարտակներում այդ նորմաները կարող են ե պետք ե բարձրացվեն:

Պետք ե նկատի ունենալ, վոր յուրացումը կարող ե բավարար — մանավանդ լավ — համարվել միայն այն դեպքում, յեթե կարմիր բանակայինները գիտեն վաղ միայն ընդհանուր քաղաքական դրույթները, այլե գիտված են կոնկրետ փաստական նույթի միջոցով նրա համար, վորպեսզի այդ դրույթները հիմնավորեն ե ապացուցեն:

4. Ընթացիկ տարում ունենալով կարմիր բանակայինների համարդասագիրք, կարմիր բանակայինների ինֆմապատրաստությունը բաղադրապատկանների համար պարտադիր ե: Ինքնապատրաստության կաղմակերպումը ու պահպանումը — խմբակավարի, քաղղեկի, զորամասի կոմիտարի ուղղակի պարտականությունն ե: Ինֆմապատրաստության վատ կաղմակերպումը պետք ե դիտել վորպես բաղադրական պարապմունքների վատ կաղմակերպում:

Բոլոր զորամասերում ինքնապատրաստությունն անց ե կացվում արտառնումահամ ժամերին, յերեկոյան: Ինքնապատրաստության ժամերը խտորեն նշվում ե մտցրվում են քաղաքապատկանների որադրացու-

ցաղի մեջ: Միջին հաշվով ինքնապատրաստություն
տուժյանը հատկացվում է մեկ ու կես ժամ՝
յուրաքանչյուր քաղաքական պարապմուն-
քից առաջ:

Ինքնապատրաստությունն անց է կացվում
ընկերով, ընկի հրամատարի ղեկավարու-
թյամբ: Ինքնապատրաստություն հիմնական
խնդիրն է — քաղաքատեղի կոլեկտիվ ըն-
թերցումն ու վերլուծումը, իսկ ընթացիկ
թեմաների շուրջը — թերթերը: Ինքնապատ-
րաստությունը կազմակերպվում խմբա-
կավարին ոգնելու համար կուսակցության
անդամներից — կրտսեր հրամկաղմից (վոր-
պես կանոն, դերակետիկ) առանձնացվում
է խմբակավարի ոգնական, վորն աշխա-
տում է խմբակավարի ցուցումներով:

Քաղաքական առաջին պարտականությունը,
բջիջի, կուսակցականների և կոմյերիտա-
կանների կարևորագույն խնդիրն է — ամեն
կերպ ոգնել խմբակավարին՝ կազմակերպել
ու կարմիր բանակայինների ինքնապատ-
րաստությունը քաղաքական պարապմունք-
ների համար, սակայն վոչ մի դեպքում է հա-
անցկացման պատասխանատվությունը:

5. Քաղաքական պարապմունքների հիմ-
նական մեթոդը հանդիսանում է քաղաքա-

րապառնգման համար կարմիր բանակային-
ների մատուցող պատրաստության հիման
վրա ծավալումն կենդանի գրույցը: Կիսա-
լաբարատոր մեթոդի դործադրումն այն ձե-
վով, ինչպիսին դործադրվում էր անցյալ
տարիներում (այսինքն՝ կարմիր բանակա-
յինների ինքնապատրաստությունն անմի-
ջապես իրեն՝ պարապմունքի ընթացքում),
չի քույլատրվում (այդ թվում չի թույլա-
տրվում նաև նախատրամում, զննային
դպրոցներում և այլն): Քաղաքապառնգ-
ման հատկացված ամբողջ ժամանակն ոգ-
տադրվում է խմբակավարի կողմից իր
խմբի հետ կենդանի գրույց անցկացնելու
համար:

Քաղաքապառնգմանը ներքին հատկացված 2
ժամից, վոչ պակաս քան 15—20 րոպեն ոգ-
տագործում է հաջորդ պարապմունքի թե-
մայի շուրջը գրույցի համար (հերթական
թեմայի հիմնական, հարցերի լուսաբանու-
մը, ինքնապատրաստություն համար ըստ
դասագրքի և թերթերի գրականություն
ցույց տալը և այլն):

Քաղաքապառնգմանը ներքին կարմիր բանա-
կայինների կողմից հիմնական հետևու-
թյունները գրի առնելը պարտադիր է: Հար-
կավոր է հասնել նրան, վոր կարմիր բանա-

կայինը հետևությունները դրի վոչ թե թե
լադրանքով, այլ ձևակերպի այն ինքնու
բույն կերպով՝ խմբակավարի, կրտսեր
հրամատարների և համեմատաբար ավել
զարգացած կարմիր բանակայինների ողջ
նույնությամբ: Խմբակավարը վոչ պակաս, քան
ամիսը մեկ անգամ պարտավոր է հավաքել
նայել և զննահատել կարմիր բանակայիննե
րի տետրակները: Կարմիր բանակայինների
տետրակները նայելը մտնում է բոլոր նրանց
պարտականությունների մեջ, ովքեր ստու
գում են քաղաքապետները:

Այն խմբակներում, վորտեղ կարմիր բա
նակայինները պարտավորում են կրտսեր
հրամատարների դեր կատարելու (դնդային
դպրոցների, վարժական դպրոցների ուսա
նողները, Հին ծառայության կարմիր բանա
կայինները) քաղաքական պարտավորւնքների
մեթոդիկան կառուցվում է, հաշվի չե առնը
լինի մեջ քաղաքական աշխատանքի և զոր
քերով ու թերթերով ինքնուրույն աշխատե
լու սովորքներ (հանձնարարել կարմիր բա
նակայիններին փոքրիկ ղեկավարներ քաղ
պարապմունքներում, դործնական աշխա
տանքի կարգով, խմբակավարի ղեկավարու
թյամբ լինինյան անկյունում զրույց և ըն

թերցանություն անցկացնել, առաջավոր
կարմիր բանակայիններին ներգրավել հե
մապոցների հետ ինքնապարտություն
կազմակերպելու և այլն): Տարվա վերջին
այդ խմբակներում կարող են դործադրվել
վոչ մեծ զբաղմունք աշխատանքներ: Հարկա
վոչ մեծ զբաղմունք աշխատանքներ դարձնել ու
վոր է հատուկ ուշադրություն դարձնել ու
սանոցների և Հին ծառայության թերթեր կար
նակայինների մեջ ինքնուրույն թերթեր կար
գալու և նրանցով աշխատելու սովորքներ
պարտավորել: Այդ նպատակով ձևավա
թացվում մի քանի պարապմունքներ են անց
կացվում այն մասին, թե ինչպես թերթ կար
գալ և ողովել նրանից, սխտեմատիկ կեր
պով ստուգվում է կարմիր բանակայինների
կողմից թերթերի ընթերցումը, կազմա
կերպվում է թերթերի կոնսուլտացիա և
այլն:

Կենդանի զրույցի ընթացքում հարկավոր
է հնարավորին չափ ողտադործել քաղաք
սաղիքը (ստանձին կտորներ, քաղվածք
ներ, առանձնապես ցուցադրական նյու
թեր):

6. Խմբակավարը պարտավոր է իր խմ
բակի կարմիր բանակայինների յուրացման
սխտեմատիկ համարման պարտել: Այդ
նպատակով խմբակավարի պարտականու
թյունը:

թյունների մեջ և մտնում հատուկ տես-
ուհե՛նալ և կանոնավոր կերպով նրա մե-
մտցնել առանձին կարմիր բանակայինները
նկատմամբ բոլոր նկատողությունները
Յուրաքանչյուր թեմայի մշակումը վերջաց-
նելուց հետո, խմբակավարը հայտնում և
խմբակին իր դնահատականն առանձին կար-
միր բանակայինների կողմից նյութի յուե-
րացման մասին, իսկ կուրսը վերջացնելուց
հետո, տալիս կուրսի մշակման մանրամասն
հանրագումարները, ցույց տալով յուրա-
քանչյուր կարմիր բանակայինի, թե ինչ բա-
ցեր ունի նա կուրսի յուրացման մեջ, կոնկ-
րետ ցուցումներ տալով, թե ինչ հարցերի
խառնել:

Խմբակավարի կարևորագույն պարտակա-
նությունն է հանդիսանում կազմակերպել
աշխատանքը հետ մնացող կարմիր բանակա-
յինների հետ: Հարկ չեղած դեպքում հետ
մնացող կարմիր բանակայինների պատրաս-
տության համար հարկավոր է նրանց միաց-
նել առանձին խմբակներում, ամբացնելով
նրանց համեմատաբար ուժեղ կարմիր բա-
նակայիններին, կուսակցականներին և կոմ-
յերիտականներին:

7. Ամբողջ ձմեռվա ընթացքում անց և

կացվում քաղաքական պարապմունքների
ստուգում — ա) վաշտային, բ) գնդային,
գ) դեվիզիական:

ա) վաշտային ստուգումն անց և կացվում
քաղղեկի և վաշտի հրամատարի կողմից,
հետևյալ թեմաներն անցնելուց հետո. —

Սկզբնական կուրսից — առաջին, 3-րդ և
4-րդ թեմայից հետո:

Ընդհանուր-քաղաքական կուրսից — ա-
ռաջին թեմայից հետո, 2-րդ թեմայից հե-
տո, 3-րդ և 4-րդ թեմաներից հետո, 5-րդ,
6-րդ և 7-րդ թեմաներից հետո և ապա
8-րդ թեմայից հետո:

Ուղղմա-քաղաքական կուրսից — առաջին
և 2-րդ թեմաներից հետո և 3-րդ թեմայից
հետո:

Բացի այդ, ստուգում անց և կացվում
նաև կարևորագույն ընթացիկ թեմաներից
հետո:

Վաշտային ստուգումն անց և կացվում
ստուգիչ հարցերի հիման վրա, վորոնք դե-
տեղված են քաղղասագրքերում և մեթոդա-
կան մշակումներում:

բ) գնդային ստուգումն անց և կացվում
դորամասի կոմիսարի և նրա կողմից լիա-
զորված պետակազմի կողմից. բոլոր ստորա-
բաժանումներում և խմբակներում — յու-

բաժանչուր կուրսի մշակումից հետո, ապա նաև կարևորագույն ընթացիկ արտա-ծրագրային թեմաներից հետո:

Գնդային ստուգումն անց ե կացվում հան-րապետարային-ստուգողական պարագլ-մունքներ անցկացնելու միջոցով, ըստ վո-րում, այդ պարագլմունքները պետք ե ընդ-դրել են անցած կուրսի հիմնական հարցե-րը: Ստուգողական պարագլմունքների թե-մաները նշվում են դիվիզիայի Քաղաքային կողմից:

Բացի այդ, կոմիտարի և գնդի բոլոր ղե-կավար աշխատողների, սեմինարների բոլոր ղեկավարների պարտականությունն ե հան-դիսանում ընտրական-ստուգողական պա-րագլմունքների անցկացնումն ամբողջ տար-վա ընթացքում:

դ) Դիվիզիական ստուգումներն անց են կացվում դիվիզիաների քաղաքայինների կող-մից ամբողջ տարվա ընթացքում: Բացի այդ, ամառային չրջանի սկզբին, կամ վեր-ջում կարող են անցկացվել քաղաքապ-մունքների տեսչական ստուգումներ (ՊՈԽՈՒ-ի հատուկ դիրեկտիվով):

դ) Քաղաքական պարագլմունքներն ըս-տուգող բոլոր անձանց պարտականությունն ե վոչ միայն գնահատել կարմիր բանակա-

յինների յուրացումը, այլև կարմիր բանա-կայինների քաղաքական պարագլմունքյան հիման վրա տալ ստորաբաժանման հրամա-տարի, խմբակավարի և քաղաքապմունք-ների ղեկավարութունը կենսագործող բո-լոր աշխատողների աշխատանքի գնահատա-կանը:

Քաղաքապմունքների ստուգումը խմբա-կում անց ե կացվում անդայման դասակի հրամատարի, ջոկի հրամատարի և խոմ-բակավարի ներկայությամբ:

Վարպետ կանոն, սահմանվում ե — հա-ջորդ քեմայի (կուրսի) մշակման անցնել միայն նախորդ քեմայի (կուրսի) լիովին յուրացումից հետո:

Յեթե ստուգողը կհայտարարի, վոր այս կամ այն թեմաները կամ հարցերը կարմիր բանակայինների կողմից բավականաչափ յուրացված չեն, — նրա ցուցումներով անց են կացվում կրկնողական պարագլմունքներ, կամ ել լրացուցիչ ժամեր են հատկացվում ինքնապատրաստության համար:

Տ. Քաղաքական պարագլմունքների վորա-կի բարձրացման գրավական և հանդիսանում սոցիալիստական մրցակցության և հարվա-ծայնության լայն ծավալումը: Քաղաքա-կան պարագլմունքների շուրջը անցմրցակ-

ցության հիմնական խնդիրն և հանդիսանում կարմիր բանակային մասսայի ղորահավաքը՝ պայքարելու քաղաքացիական ծրագրի բարձր յուրացման շուրջը։ Սոցիալիստական մրցակցությունը պետք է ուղղված լինի՝ արագորեն վերացնելու այն առանձին բացերը, վորոնք կհայտարարվեն կարմիր բանակայինների քաղաքական պատրաստության մեջ։ Բացի այդ, պայմանագրերի կնքումը պետք է նախորդեն յուրաքանչյուր նոր կուրսի, նոր կարևորագույն թեմաների, մասնավորապես ընթացիկ քաղաքականության թեմաների մշակմանը։

Հարկավոր և հառնել քաղաքացիական ծրագրի շուրջը կնքվող սոցիալականության պայմանագրերի առավելագույն կոնկրետություն։ Պայմանագրերի հիմնականորեն կետերը պետք է լինեն — թեմաների իր ժամանակին մշակումը սահմանված ժամանակամիջոցում, ինքնապատրաստության կազմակերպումը, աշխատանքի կազմակերպումը հետ մնացողների հետ, սխտեմատիկ աշխատանք թերթերի հետ և այլն։ Կարմիր բանակայինների կողմից թեմաների յուրացման ստուգման ամբողջ աշխատանքը միաժամանակ պետք է հանդիսանա կարմիր բանակայինների կողմից սոցիալիստական

մրցակցության պայմանագրերի կատարման ստուգում։

Խմբակում սոցիալիստական մրցակցության կազմակերպիչն ու ղեկավարը հանդիսանում է խմբակավարը։ Խմբակավարի աշխատանքի գնահատական պետք է տրվի, հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչպես է խմբակավարը ղեկավարում սոցիալիստական մրցակցությունն իր խմբակում։

Կուսակցականներին և կոմյերիտականներին որինակելիութունն ու բարձր ակտիվությունը դրավական և հանդիսանում սոցիալիստական մրցակցության լայն ծավալման, կարմիր բանակային մասսային լայն ղորահավաքի յենթարկելու՝ պայքարելու քաղաքացիականների բարձր յուրացման համար։

3. ԿԱԴՐԵՐԻ ՄԱՍԻՆ

9. Կուրս վերցնելով խմբակավարական աշխատանքի մեջ ներգրավելու դասակի հրամատարին, թույլ չտալ ձեռնկան մոտեցում խմբակավարների ընտրությունը և այն դասակի հրամատարը, վորը բավականաչափ պատրաստված չէ քաղաքական պարտավորումներ անց կացնելու համար, փոխարին

նել նրան կրտսեր պետկազմի կուսակցական գերակետիկներին վերցրած խմբակավարներով:

Խմբակավարների ընտրութեան շուրջը դրահավաքի յենթարկել պետկազմի լայն հասարակական կարծիքը: Այն դասակի հրամատարների առաջ, փորձնք իրենց անպատրաստութեան պատճառով ներգրավված չեն քաղաքապետներին ղեկավարմանը, դրամասի կոմիտարը պետք է խնդիր դնի՝ մինչև ձմեռային չըջանի վերջը վերացնել իրենց քաղաքական պատրաստականութեան բացերը, այդ դործում նրանց ամեն կերպ ոգնութիւնն ցույց տալով և ստուգելով ամբողջ ձմեռվա ընթացքում նրանց աշխատանքը՝ իրենց պատրաստութեան վրա:

Հատուկ զգուշութեամբ պետք է ընտրել հին կարմիր բանակայինների հետ քաղաքապետներին տանող խմբակավարներին, դրա համար առանձնացնելով համեմատաբար ալիւի փորակյալ և փորձված խմբակավարների: Արդելովում է հին կարմիր բանակայինների հետ պարապելու համար նշանակել այնպիսի խմբակավարները, փորձնք առաջին անգամն են պարապմունքներ տանում:

Հարկավոր է ամեն կերպ վերացնել խմ-

բակավարների կազմի հոսունութիւնը, հասնելով նրան, վոր խմբակավարն ամրացվի տվյալ խմբակին մինչև ձմեռային շրջանի վերջը:

Անկախ նրանից, քե տվյալ դասակի հրամատարը պարապմունք տանում է կարմիր բանակայինների հետ, քե վոչ, նա պետք է պատասխանատվութիւն կրի իր դասակի քաղաքական պատրաստականութեան համար, ապահովի քաղաքապետներին նորմալ ընթացքը, լիովին իրագեկ լինի, քե ինչպես են յուրացնում քաղաքապետներն իր ստորաբաժանման կարմիր բանակայինները:

10. Հարկավոր է վճռական կուրս վերցնել՝ ամբողջ կրտսեր հրամկազմին խմբակավարների մոտիկ ոգնականների վերածելու, հասնելով նրան, վոր կրտսեր հրամատարը պատասխանատվութիւն կրի իր ջոկի քաղաքական պատրաստութեան համար:

Վորպես կանոն, կրտսեր հրամատարները նշանակվում են իրենց ջոկի կարմիր բանակայինների ինքնապատրաստութեան ղեկավարներ և կազմակերպիչներ: Այն կրտսեր հրամատարներին, փորձնք չեն կարող կատարել այդ խնդիրը, կարելի չէ փոխարինել չարքային կարմիր բանակայինով, բայց ա-

նելով վոչ թե վորպես կանոն, այլ վորպես բացառութիւն: Քաղղեկի պարտականութիւնն է կազմակերպել սիստեմատիկ հատուկ աշխատանք այն կրտսեր հրամայարներին հետ, վորոնք իրենց անբավարար պատրաստականութեան շնորհիւ ներդրաված չեն ղեկավարելու կարմիր բանակայինների ինքնապատրաստութիւնը:

Կրտսեր հրամատարը պարտավոր է ներկա լինել կարմիր բանակայինների հետ տարվող բոլոր քաղաքական պարապմունքներում: Խմբակավարը պետք է կրտսեր հրամատարին ներդրովի առանձին հանձնարարութիւններ անցկացնելու իրենց՝ քաղապարապմունքների ընթացքում (ոգնութիւն ցույց տալ կարմիր բանակայիններին հետեութիւնները դրելում, այս կամ այն հարցի լրացուցիչ (կացախորութեամբ և այլն):

11. Կրտսեր պետկազմի հետ տարվող քաղապարապմունքների սիստեմը կառուցվում է կրտսեր հրամատարի դերի համապատասխան, հորպէս խմբակավարի ոգնական: Կրտսեր հրամատարների հետ պարապմունք տանելուն հատկացվում է կրտսեր հրամատարի ուսուցման որերում — 2-ական ժամ: Այդ ժամերն ոգտադրօրծվում են պատրաս-

տելու կրտսեր հրամատարին կարմիր բանակայինների հետ աշխատանք տանելու համար: Կրտսեր հրամատարի հետ խորացրած կերպով մշակվում է ըստ բովանդակութեան այն թեման, վորի շուրջը նա մոտակա որերում պետք է ղեկավարի կարմիր բանակայինների ինքնապատրաստութիւնը: Բացի այդ, կրտսեր հրամատարին պարապմունքի ժամանակ պետք է տալ հիմնական մեթոդական ցուցումներ այն մասին, թե ինչպես կարգաւ և բացատրել դասադիրքն ու թերթը:

Պարապմունքների ղեկավարները յդետք է նկատի ունենան, վոր կրտսեր հրամատարների հետ տարվող քաղաքական պարապմունքները պետք է դրված լինեն այնպես, վոր սպահովեն կրտսեր հրամատարի անշեղ քաղաքական անուրը:

Բացի ըստ ծրագրի քաղապարապմունքներից, կրտսեր հրամկազմի հետ տաննորյակում մի անգամ անց են կացվում քաղապարապմունքներ ընթացիկ կարեւորագույն թեմաների շուրջը:

Կրտսեր պետկազմի հետ քաղապարապմունքներ տարվում են դումարտակային մասշտաբով: Քաղապարապմունքների ղեկավարները լինում են քաղղեկներ(վաշտի հրա-

մատարները՝ զորամասի կոմիսարի ցուցումով:

Այն կրտսեր պետկազմը, վորոնք ղեկավարում են հին ծառայութեան կարմիր բանակայինների ինքնապատրաստութեանը, հրահանգչական քաղաքապետներին համար միացվում են հատուկ խմբակում (կրտսեր պետկազմի ուսուցման որերին):

Յերկային զորամասերում այն կրտսեր զորամատարների հետ, վորոնք կարմիր բանակայինների հետ պարապմունքներ չեն տանում, քաղաքապետները տարվում են նույն կարգով, ինչ վոր 2-րդ տարվա ծառայութեան կարմիր բանակայինների հետ:

12. Խմբակավարների հետ տարվող առաջիկա հրահանգչական պարապմունքների փոխարեն, բոլոր դնդերում կադմակերպվում են խմբակավարների մշտական սեմինարներ: Սեմինարներն իրենց աշխատանքները պետք է սկսեն նոյեմբերի վերջին և աշխատեն ձմեռային շրջանի ամբողջ ընթացքում: Սեմինարների պարապմունքներն անց են կացվում տասնորյակում մի անգամ: Սեմինարի պարապմունքներին հատկացվող ժամանակը մտցվում է զորամասի ուսումնական որադրացուցակի մեջ:

Սեմինարի աշխատանքը կառուցվում է հնարավորին չափ շերտավորված, հարմարեցված խմբակավարների առանձին կատեգորիաներին: Սեմինարը պետք է բաժանված լինի ամենաքիչը յերեք խմբակի:

Խմբակ № 1 — այն խմբակավարները, վորոնք պարապմունքներ են տանում հին ծառայութեան կարմիր բանակայինների հետ:

Խմբակ № 2 — Խմբակավարներ, վորոնք պարապմունքներ են տանում նորեկ կարմիր բանակայինների հետ — քաղաքականագետ ավելի պատրաստված, ավելի փորձված, վորոնք առաջին տարին չեն, վոր պարապմունքներ են տանում:

Խմբակ № 3 — Խմբակավարներ, վորոնք պարապմունքներ են տանում նորեկ կարմիր բանակայինների հետ և առաջին տարին է, վոր պարապմունքներ են տանում, խմբակավարներ կրտսեր պետկազմի հետ և այլն:

Սեմինարի աշխատանքի ղեկավարութեանը կենսագործում է գնդի կոմիսարը: Խմբակների ղեկավարները նշանակվում են գիվիզիանների քաղաքական քաժիմների կողմից:

Սեմինարը պետք է դառնա խմբակավարի մարքսիստական-լենինյան պատրաստութեան դպրոցը: Սեմինարի ղեկավարը չպետք

ե- ուսմանախալվի քաղաքապետներն ա-
ռաջիկա թեմայի առթիվ «ընդհանուր» դը-
րույթներով, այլ ապահովի խմբակավա-
րների անշեղ քաղաքական վարակի սիստե-
մատիկ անուր: Սեմինարում հարկավոր է
մշակել հանգուցյային տեսական հարցերը
հարմարեցված քաղաքական պարապմունք-
ների ծրագրին, հաշվի առնելով խմբակա-
վարի քաղաքական պատրաստականությունը
և այն հարցերը, վորոնք խմբակավարը
թույլ է կողմնորոշել: Միաժամանակ սեմի-
նարում խմբակավարը պետք է ստանա մե-
թոդական կոնսուլտացիա առաջիկա պա-
րապմունքի առթիվ և կոնկրետ, փաստացի
ու տեղական մատերիալ հերթական թեմա-
յի վերաբերյալ:

Սեմինարի աշխատանքների հաջողության
կարևորագույն պայմանն է հանդիսանում
խմբակավարի նախնական պատրաստու-
թյունը սեմինարի պարապմունքի համար:
Սեմինարի ղեկավարը և խմբակների ղեկա-
վարները պարտավոր են պահանջել, վոր
խմբակավարը սեմինարի պարապմունքին
գա ինքնուրույն կերպով կարդալով և մը-
շակելով նրան ցույց տրված նյութը:

Սեմինարի պարապմունքի մեթոդը — նրա
մասնակիցների ղեկուցումները, վորին

պետք է հետևի այդ ղեկուցումների քննար-
կումը ղեկավարի յեզրափակման խոսքը:

13. խմբակավարին առաջիկ ոգնությունն
ցույց տալու և խմբակավարին սովորեցնե-
լու համար իսկական նյութիկ ոգնությունը, մե-
թոդական մշակումներն ընթացիկ տարում
բաց են թողնվում «ոգնություն կուսուցուց-
մանը» մշակման տիպի: Յուրաքանչյուր
մեթոդական մշակման մեջ մտցվում է —
ա) միջանկյալ հոդված (թեմայի հիմնական
հարցերի կարճ մեկնաբանությունը) . բ)
մեթոդական ցուցումներ (ստուգողական
հարցեր, պարապմունքների պլանը և այլն) .
գ) խմբակավարի ինքնուրույն ընթերցանու-
թյան համար հանձնարարված գրականու-
թյունը և դ) աշխատանքային նյութ խմբա-
կավարի համար (քաղվածքներ Լենինի ու
Ստալինի աշխատություններից), հոդված-
ներ կուսակցական մամուլից, կարևորա-
գույն թվեր ու փաստեր և այլն:

Քաղբաժինները և զորամասերի կոմիտե-
ները պետք է սովորեցնեն խմբակավարին
աշխատել մեթոդական մշակումների նոր
տիպով: Քաղբաժինների և զորամասերի
կոմիտեների կարևորագույն խնդիրն է՝
ընթացիկ թեմայի շուրջը լրացուցիչ կեր-
պով խմբակավարին մատակարարել նոր,

ընթացիկ, կոնկրետ, փաստական նյութ
Այդ խնդիրը պետք է դրված լինի նաև քաղ-
աշխատանքների կաբինետների առաջ:

ԲԳԿԲ Քաղվարչության Ազիտայրուպի պետ՝
Ռադիոնով
Ավագ հրահանգիչ՝ Բերլին

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե»

ԲԳԿԲ Քաղվարչության

պետի տեղակալ, ԲՈՒԼԻՆ

2 հոկտեմբերի 1931 թ.

Ժ Ր Ա Գ Ի Ր

1931-32 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՇԱՐ-
ՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏԱԵՐ ՊԵՏԱԿԱԶՄԻ
ՇԵՏ ՏԱՐՎՈՂ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆԲՆԵՐԻ.

I. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՐՍ

1. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ԵՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խորհրդային Միությանն ու կապիտա-
լիստական յերկրները: Կապիտալիզմի ճեղ-
նաժամը և սոցիալիզմի չրջանը թեակոխած
ԽՍՀՄ տնտեսական հսկայական վերելքը և
ամբողջ ժողովրդական տնտեսության ա-
ճում: Սոցիալիստական եկոնոմիկայի հիմ-
քերի ավարտումը 1931 թվին ԽՍՀՄ-ում,
կոլեկտիվացիան քաղաքականության հա-
ջողությունները և նրա հիման վրա կուլա-
կուլյան լիկվիդացիան՝ վորպես դասա-
կարգ և հակառուլթյունների կտրուկ սրումը
ԽՍՀՄ և փոքր կապիտալիզմի միջև: Պա-

5010—2

33

տերադմի վտանգի աճումը և նոր պատե-
րադմի ու ինտերվենցիայի պատրաստու-
թյունը ԽՍՀՄ դեմ: Մեր արտաքին քաղա-
քականությունը — դա խաղաղության քաղ-
աքականությունն է: Յերկրի պաշտպանու-
թյան և Կարմիր բանակի մարտական հզո-
րության ամեն կերպ ամրացման անհրա-
ժեշտությունը: Կարմիր բանակը — ԽՍՀՄ
— համաշխարհային պրոլետարիատի սո-
ցիալիստական հայրենիքի պահակն է: Կար-
միր բանակի և նրա մարտիկների խնդիր-
ները ԽՍՀՄ պաշտպանության գործում:

2. Կարմիր բանակը — «ազատագրված
բանվորների ու դյուզագինների բանակն է,
Հոկտեմբերյան հեղափոխության բանակն
է, պրոլետարիատի դիկտատուրայի բա-
նակն է»: (Ստալին): Կարմիր բանակը —
պրոլետարական սկետության կողմից դա-
սակարգային թշնամիներին ձեռնու գեներ է
Կարմիր բանակը — բոլոր ազգությունների
բանվոր զասակարգի և աշխատավոր դյու-
զագիության լայն մասսաների զինված
միությունն է: «Բանվորների և դյուզագի-
ների դաշինք — Կարմիր բանակը — ամուլ
է, սերտ անքակտելի» (Լենին): Բանվոր զա-
սակարգի և նրա կուսակցության ղեկավար
դերը Կարմիր բանակում: Դասակարգային

խորթ տարրերին թույլ չտալը Կարմիր բա-
նակում: Կարմիր բանակի պետկադմի սո-
ցիալական-դասակարգային դեմքը: Կար-
միր բանակը — աշխատավորության ռադ-
մական պատրաստության դպրոցն է: Կար-
միր բանակին «առաջնակարգ քաղաքական
դպրոց են» (Գամառնիկ): Կարմիր բանակի
դերը սոցիալիստական շինարարության
մեջ: Կարմիր բանակի կապն աշխատավո-
րության հետ: «Ժողովուրդն ու բանակը կաղ-
մում են մի ամբողջություն, մի ընտանիք»
(Ստալին): Կարմիր բանակի ինտեգրացիո-
նալ-դասակարգային բնույթը: «Կարմիր
բանակը հանդիսանում է ժողովուրդների
ձեզբայրության բանակը, ճնշված ժողո-
վուրդներին ազատագրելու բանակը համաշ-
խարհային հեղափոխության բանակը, բո-
լոր յերկրների բանվորների բանակը» (Ստա-
լին): Համկ(ը)կ — Կարմիր բանակի առաջ-
նորդն է: Կարմիր բանակի տարբերությու-
նը բուրժուական բանակներից — Կարմիր
բանակը պրոլետարական դիկտատուրայի
զենքն է, բուրժուական բանակները — իմ-
պերիալիզմի զենքն են, աշխատավորույթյա-
նը ձեռնու գեներ:

2. ԽՍՀՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒ-
ԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: ԿԱՐԴԱՊԱՀՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

1. Կարմիր բանակի մարտական հզորու-
թյան աճումը սոցիալիստական շինարարու-
թյան հաղթանակների և Կարմիր բանակի
ամուր բայլելիկյան ղեկավարության հիմն
վրա: Խնդուստրացման ու կոլեկտիվացման
հաջողությունները, կոլխոզնիկի՝ հողա-
գործության կենտրոնական ղեմք դառնալը
նոր, բանվոր, հարվածային և կոլխոզնիկ
մարտիկի բանակ դալն ու Կարմիր բանակի
դասակարգային միաձուլության ամրացու-
մը: Կարմիր բանակի վերակառուցումը
տեխնիկապես հաղեցումը ԽՍՀՄ ինդուս-
տրացման հիման վրա: Տեխնիկային տիրա-
պետելու խնդիրը վորպես Կարմիր բանակի
շինարարության մեծական խնդիր: Ընդ-
վորոշելովը տեխնիկային տիրապետելու
մասին:

2. Յերկրային սիստեմը ԽՍՀՄ գինված
ուժերի շինարարության հիմքն է: Կադրա-
յին և յերկրային զորամասեր: Սոցիալիս-
տական արդյունաբերության, համատարած
կոլեկտիվացման նշանակությունը յերկրա-
յին շինարարության համար: Ընդհանու-
րաբարադիր ղինվարական ծառայությունը

Կարմիր բանակի համալրման սիստեմը, իս-
կական ղինվարական ծառայությունը, պա-
հեստում դտնվելը, արտագորային պատ-
րաստությունը: Աշխատավորությունը ուղ-
մական պատրաստությունը:

3. ԽՍՀՄ գինված ուժերի կազմը, ԲԳԿԲ
կազմակերպությունը՝ կապված այն պա-
հանքների հետ, վորպիսիք առաջադրում է
ժամանակակից մարտի բնույթը և Կարմիր
բանակի տեխնիկապես հաղեցումը: Զորքի
տեսակները, նրանց նշանակությունն ու հա-
մագործակցությունը: Հետևակը վորպես
զորքի հիմնական տեսակ: Հեծելազորը,
հրետանին, զրահապատ ուժերը, տանկերը,
քիմիական զորքերը, կապի զորքերը, ոդա-
յին նավատորմը, ծովային նավատորմը և
նրանց՝ համագործակցությունը հետևակի
հետ:

4. Կարմիր բանակի վարչական կենտրո-
նացումը: Յերկաթե հեղափոխական կար-
դապահությունը — Կարմիր բանակի մար-
տական հզորության առաջին գրավականն
է: Կարդապահության դասակարգային ե-
յությունը Կարմիր բանակում, նրա տար-
բերությունը բուրժուական բանակների
կարդապահությունից: Լենինը Կարմիր բա-
նակի կարդապահության մասին — «Ով ա-

մեն կերպ և անձնվիրաբար չի ողնում կարմիր բանակին, ամբողջ ուժով չի պաշտպանում կարգն ու կարգապահությունը նրանում, — նա մատնիչ է և դավաճան»։ Կարգապահության նշանակությունը մարտական պարագայում։ Որինակներ քաղաքացիական կոռիւմների փորձից՝ կարգապահության նշանակության մասին։ «Յեթե մտածենք այն մասին, թե ինչն եր ընկած վերջիվերջո նրա ամենախորը հիմքում, վոր այդպիսի պատմական հրաշք տեղի ունեցավ, վոր թույլ, ուժասպառ յեղած, հետամնաց մի յերկիր հաղթեց աշխարհի ամենաուժեղ յերկրներին, — ապա մենք կտեսնենք, վոր նա — կենտրոնացումն եր, կարգապահությունը և չտեսնված անձնազոհությունը» (Լենին)։ Կարգապահության նշանակությունը խաղաղ ժամանակ։ Ինչու ԲԳԿԻ տեխնիկայով հաղեցումը և այդ տեխնիկային տիրապետելու խնդիրները խնայանում են ամեն կերպ ամրացնել կարգապահություն ԲԳԿԻ-ում։ Հրամատարի իրավունքներն ու պարտականությունները զորամասում կարգապահությունն ամրացնելու գործում։ Պայքար՝ առանց կարգապահական խախտումների զորամասի համար։ Կարգապահական պրակտիկան, խրախուսանքներ, պարգևներ։

ԲԳԿԻ զորամասերին և մարտիկներին առաջադրվող պահանջները — ամուր դասակարգային միաձուլություն, մարտիկների քաղաքական բարձր գիտակցություն, կատարելապես տիրապետում մարտական տեխնիկային, ընկերական փոխադարձ ողնություն և փոխադարձ հարգանք, կայունություն յերթային կյանքի դժվարությունները հաղթահարելու և կարգապահություն։ Կարմիր բանակայինների պարտականությունները ռազմական գաղտնիքը պահպանելու։ Ինքնաքննադատությունը Կարմիր բանակում, վորպես ԲԳԿԻ-ում մարտունակությունն ամրացնելու ղեկը։ Ինքնաքննադատության գործադրման առանձնահատկությունները Կարմիր բանակում։

5. Կարմիր բանակայինների իրավունքներն ու պարտականությունները։ Կարմիր բանակայիններն ու պետկազմը։ Հրամատարը — «վճռական, հաստատուն, համարձակ և մարտական ղեկավարն է իր զորամասի» (բժիշկների քարտուղարների 3-րդ խորհրդակցություն)։ Պետկազմի դերը զորամասի մարտական և քաղաքական պատրաստության ղեկավարության, կարգապահության ամրացման գործում։ Միահրամատարությունը Կարմիր բանակում։ Քաղղեկները, վաշտի

հրամատարի քաղաքականը, կոմիսարները, դեղի հրամատարի քաղաքականը: Շտաբներն ու վարչութիւնները: Քաղմարմինները: Ռազմական տրիբունալն ու դատախազութիւնը: ԽՍՀՄ Հեղափոխական Ռազմական Խորհուրդը: ԲԳԿԻ Քաղվարչութիւնը: Կուսակցութիւնն ու նրա կենտկոմը և Կարմիր բանակը: Ընկ. Վորոշիլովը — Կարմիր բանակի առաջնորդն է, վորը հետեւողականորեն աւելի և կացնում կուսակցութեան և կենտկոմի դիմը: Ընկ. Վորոշիլովի կենսագրութիւնը: Ընկ. Գամարնիկը — ԲԳԿԻ Քաղվարչութեան պետ և ԽՍՀՄ Հեղափոխական Ռազմական Խորհուրդի նախագահի տեղակալ: Ընկ. Գամարնիկի կենսագրութիւնը:

3. ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ: ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Ապագա պատերազմի և ժամանակակից մարտի բնույթը: Ժամանակակից ռազմական տեխնիկայի նշանակութիւնն ու հզորութիւնը: Բանակի մոտորացումն ու մեքենայացումը: Կարմիր բանակի տեխնիկային հաղեցումը, վորպես կարեւորագույն ողակ ԲԳԿԻ ժամանակակից շինարարութեան: Մարդն ու մեքենան, ռազմական տեխնիկան և դասակար-

դային դիտակցութեանը: «Բայց ինչինքնը պետք է տիրապետեն տեխնիկային» լողունդի նշանակութիւնը Կարմիր բանակի համար: «Մեղ վրա յեղած հարձակմանը մենք պարտավոր ենք հակադրել մեր յերկաթյա, բարձր մարզված, քաղաքականապես կայուն, լավ սպառազինված բայց չեւեռ բանակը» (Վորոշիլով):

2. Ինչպես և կառուցվում զորամասի մարտական պատրաստութեան յլանը ձմեռային շրջանի համար: Հրաձգային պատրաստութիւնը (հրաձգութիւնների նոր կուրսը): Տակտիկական պատրաստութիւնը վորպես մարտական պատրաստութեան առանցք: Մասնագիտական պատրաստութիւնը: Ֆիզիկական և շարային պատրաստութիւնը: Ներանց տեղն ու նշանակութիւնը մարտական ուսուցման սխտեմում: Տակտիկական և համադրային (շոկատային) ուսուցումը: Մանյովրաները: Գնդային դպրոցներն ու մասնագիտական ստորաբաժանումները:

3. Քաղաքական աշխատանքը—դենք ե՛ւ ամբողջելու ԲԳԿԻ մարտունակութիւնը: Կուսակցութիւնը ղեկավարում է քաղաքական աշխատանքը Կարմիր բանակում: Քաղաքական աշխատանքը Կարմիր բանակում վորպես կուսակցութեան գլխավոր գծի շուրջը մար-

տիկներին դասակարգայնորեն միաձուլելու, մարտական ուսուցման տեմպերի և վորակի բարձրացման զենք: Քաղաքական աշխատանքի կազմակերպումը: Պետկազմի դերը քաղաքական աշխատանքում: Քաղմարմինները:

Կոմունիստական բժշկները Կարմիր բանակում և նրանց աշխատանքը: Կոմսոմոլի կազմակերպությունը Կարմիր բանակում: Կոմունիստներին և կոմյերիտականներին խնդիրները վորպես առաջավորներ ուսուցման մեջ, նրանց որինակելությունն ուսուցման և կարգապահության մեջ: ԲԳԿԻ կոմունիստները — ՀամԿ(բ)՝ մարտական ջոկատն են, վորոնք պայքարում են կուսակցության դրլխավոր դժի համար ընդդեմ ամեն տեսակի ոպորտունիզմի: Կոմունիստներն ու անկուսակցականները, կարմիր բանակայիններին խնդիրները բժշկ նկատմամբ, կուսակցության և կոմսոմոլի մեջ մտնելը:

Մասսայական աշխատանքը, ակումբները, լենինյան անկյունները, հասարակական կազմակերպությունները: Կարմիր բանակային մամուլը (չբժանային, դիվիզիական, գնդային, վաշտային):

Կրոնի դասակարգային ելույթները: Հակակրոնական աշխատանքը ԲԳԿԻ-ում:

4. Ամբողջ յեռանդը, ամբողջ խանդավա-

ռույթյունը զորամասի մարտական պատրաստության ամբողջական ամրացման վրա կենտրոնացնելու անհրաժեշտությունը: Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը վորպես կարևորագույն զենք մարտական պատրաստության թափերի ու վորակի բարձրացման և զորամասի ամուր միաձուլության: Սոցմրցակցության ձևերն ու որյեկտները Կարմիր բանակում, սոցմրցակցության ձևերը մեքենայաբար ձեռնարկություններից բանակի փոխադրելու վնասակարությունը: Պայքար մարտական պատրաստության պլանների կատարման ու գերակատարման համար: Պետկազմը սոցմրցակցության ղեկավարն է: Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների դերը սոցմրցակցության մեջ: Արտադրության, սովխոզների, կոլխոզների նախկին հարվածայիններ՝ կարմիր բանակայինները — մարտական պատրաստության հարվածայիններ են Կարմիր բանակում: Ռաջիտալիզատորական աշխատանքը և նրա նշանակությունը ԲԳԿԻ մարտունակություն բարձրացման համար:

4. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

1. Կարմիր բանակի մարտական ուղին — աշխատավորության հերոսական պայքարի

պատմությունն և բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ՝ պրոլետարական դեկտատուրայի համար, ԽՍՀՄ սոցիալիզմի շինարարութեան հնարավորութիւնն ապահովելու համար, համաշխարհային հեղափոխութեան համար: Կարմիր բանակի հերոսական տրադիցիաների նշանակութիւնը նորեկ մարտիկներին համար:

Ձեռնված բանվորներին առաջին ջոկատները 1905 թվին: Լենինը բանվորների զինման մասին: 1914 թվին իմպերիալիստական պատերազմը: Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու Լենինի լոզունգը: Փետրվարյան հեղափոխութիւնը: Հին բանակի քայքայումը: Կուսակցութեան աշխատանքը ցարական բանակում: Բանվորական կարմիր դժարդիւրան, նրա ստեղծումը և դերը կոմունիզմի շինարարական ժամանակ և Հոկտեմբերին: Նավատորմը Հոկտեմբերյան ուրերին:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը: Կալվածատերերի և կապիտալիստների իշխանութեան տապալումը և բանվոր դասակարգի դեկտատուրայի հաստատումը: Ինչ կորցրին կալվածատերերը, կապիտալիստները և համաշխարհային իմպերիալիզմը Հոկտեմ-

բերյան հեղափոխութեան հետեանքով: Յերտասարդ խորհրդային հանրապետութեան միջադպրոցները: Խորհրդային իշխանութեան խաղաղութեան քաղաքականութիւնը: Իմպերիալիստներին, և նրանց ոգնութեամբ ներքին հակահեղափոխութեան գլխաված պայքարի սկիզբն ընդդէմ պրոլետարական պետութեան — համաշխարհային հեղափոխութեան ոճախի, հանուն կապիտալիստական կարգերի վերականգնման: Հակահեղափոխութիւնը Դոնում և Կուբանում և յերտասարդ ու դեռ համըացած խորհրդային հանրապետութեան պայքարը նրանց դէմ: Դերմանական իմպերիալիստների հարձակումը: Բրեստի հաշտութիւնը: Լենինի պայքարը Տրոցկու և «ձախ» կոմունիստների դէմ՝ շնչուման, ժամանակ չահելու, հեղափոխութեան ուժերը դորահապաքի յենթարկելու համար: Կուսակցութեան և կառավարութեան միջոցառումները Կարմիր բանակ կազմակերպելու համար:

2. 1918 թվին ինտերվենցիան: Չեխոսլո-վակներին — անգլո-Ֆրանսական իմպերիալիզմի աղղ դործակալութեան ապստամբութիւնը: Իմպերիալիստների դորքերն Արևմտեղեկում, Վլադիվատոկում, Բազում: Դերմանական իմպերիալիստները և սկորո-

պաղէնան Ուկրայնայում: Հակահեղափոխութիւնը հարաւում: «Մենք նորից ընկածը պատերազմի մեջ, մենք գտնւում ենք պատերազմի մեջ և այդ պատերազմը վոչ միայն քաղաքացիական և կրօնականների, կալվածատերերի, կապիտալիստների դեմ, վորոնք միացել են մեր դեմ — այժմ արդեն մեր դեմ կանգնած և անգլո-Ֆրանսական իմպերիալիզմը... Մեր խնդիրն և այժմ հեղափոխութեան այդ ուժը, այդ սոցիալիստական փառսը, վոր գործում և ամբողջ աշխարհում, պաշտպանել և պահպանել. այդ խնդիրը ներկա պայմաններում հանդիսանում և ուսի մական խնդիր» (Լենին): Պայքարը չեխոսլոակների դեմ: Առաջին զորահամալսները: Լենինգրադի, Մոսկւայի, Իվանո-Վոլնեսենսկիւ կոմունիստներն ու բանվորները ճակատում: Վոլդայի նաւատորմիղը և նրա դերը չեխոսլոակներին դեմ մղած պայքարում: Ձեխերի նահանջը: Պայքար Յարեցինի համար: Ընկ. Ստալինի և Վորոշիլովի դերը «Կարմիր Վերդենի» պաշտպանութեան գործում:

«Բանակն ամրանում և և կոմիւնում և չեխոսլոակներին և սպիտակ-գվարդիականներին դեմ մղած մարտերում» (Լենին): Կամաւորականից դեպի կանոնավոր Կար-

միր բանակ: 1918 թ. դերմանական հեղափոխութիւնը: Լենինի լոզունգը — «Մեզ պետք և 3 միլիոն մարդուց բաղկացած բանակ, մենք պետք և ունենանք այդ և կունենանք»: Գերմանական բանակի քայքայումը, գերմանական իմպերիալիստներին յետ քաշելէն Ուկրայնայից և Ուկրայնայի ազատագրումը:

3. 1919 թիւը: Խնտերվենցիայի յետուշրջանը: ՌՍՀՄ կրակե ողակի մեջ: Իմպերիալիզմի կատաղի հարձակումը սոցիալիստական հայրենիքի վրա: Կոլչակ, Դենիկին, Յուդենիչ — իմպերիալիզմի աղետները: Կոլչակի հարձակումը արեւելքից, Դենիկինի հարձակումը հարավում, Յուդենիչի հարձակումը Լենինգրադի վրա: Իմպերիալիստների զորքերը հարավում: Սպիտակ գվարդիականութեան դատակարգային ելութիւնը: Կալվածատիրական-բուրժուական կարգերի վերականգնումը: Սպիտակ-գվարդիականների և խնտերվենցիաների ծրագիրը: Միջազգային իմպերիալիստներին ոգնութիւնը Կոլչակին և Դենիկինին: Մենշեւիկներին, եսերներին, ազգայնական կուսակցութիւններին, (պետլյուրշչինայի, դաշնակներին, մուսամաթիստներին, վրացական մենշեւիկներին) դերը հակահեղափոխութեան կադմակերպման մեջ: Հանրապետութեան տնտե-

սական դրուժյունը: Այդ չըջնալի Կարմիր
բանակի բնույթագիրը— անձնվեր հերոսու-
թյուն, տեխնիկական վատ հաղեցում, չվե-
րացված պարտիզանականություն, ամենա-
ծանր պակասություն մատակարարման գոր-
ծում: Պայքար պետերի կազմի համար: Կո-
սակցության և բանվոր դատակարգի հակա-
դուժյամբ հին մասնագետների ոգտադու-
ծում, բանվորա-դյուղացիական հրամանա-
տարների առաջ քաշում և պատրաստում
լենինը— կազմակերպիչն ու առաջնորդն և
ինտերվենտների և հակահեղափոխության
դեմ մղած մարտերի:

Կարմիր բանակի պայքարը կոլչակ-
կոլչինայի դեմ: Կոմունիստների, կոմյե-
րիտականների, բանվորների զորահամալը
դեպի ճակատ: Ընդ-Ֆրունզեն—կոլչակի դե-
մղած մարտերի ղեկավար: Գյուլագյու-
թյան մասսայական պայքարը կոլչակ-
կոլչինայի դեմ: Միջակի վճռական շրջա-
դարձը դեպի Խորհրդային իշխանության
կողմը: Պարտիզանական շարժման հսկայա-
կան թափը: Բազուկուսլանի ոսկերացիան
Կոլչակի ջախջախումը:

Պայքար դենիկինչինայի դեմ: Ընդ-
ընդ. Ստալինն ու Վորոշիլովը դենիկինյան
ճակատում: Նրանց դեբը հաղթանակներ
կազմակերպման գործում: Առաջին հեծյա-

բանակի տեղծումը: Ամբողջ տնտեսության
զորահամալը պատերազմի կարիքների հա-
մար: «Բոլորը դեպի ճակատ»: Դենիկինի
նահանջն Ուրյոլից: Դենիկինի բանակի քայ-
քայքումն ու ջախջախումը:

Յուդենիչը և Լենինգրադի բանվորների
հերոսական պայքարը նրա դեմ: Բալտիա-
կան նավատորմի դեբը Լենինգրադի պաշա-
պանության գործում:

Պայքար իմպերիալիստների զորքերի
դեմ 1919 թվին: Կոմունիստների աշխա-
տանքն իմպերիալիստական բանակներում,
ապստամբություն Փրանսական նավատոր-
մում Սև ծովի վրա: Իմպերիալիստների դա-
դասկարդային քաղաքականությունը,
մանր-բուրժուական կուսակցությունների
դեբը, վորպես իմպերիալիզմի վարձկաննե-
րի: ԲԳԿԲ հաջողություններն ինտերվենտ-
ների դեմ մղած պայքարում: Նավատորմը
Կասպից ծովում:

4. Խորհրդային հանրապետության հե-
ղափոխական պատերազմն իմպերիալիստա-
կան Լեհաստանի դեմ: Ֆրանսիայի դեբը
սպիտակ Լեհաստանի կողմից ԽՍՀՄ վրա
հարձակումը կազմակերպելում: Հեղափո-
խական շարժումների աճումը Լեհաստա-
նում, վորպես մեկն այն պատճառներից,
վորոնք լեհական բուրժուազիային մղում

եյին դեպի պատերազմ խորհուրդների դեմ
Լեհաստանը և Պետլյուբան: Խորհրդային
իշխանության խաղաղության քաղաքակա-
նությունը Լեհաստանի նկատմամբ: ԲԳԿի
հաղթական հարձակումը սպիտակ-լեհերի
վրա: Առաջին Հեծյալ բանակի զործողու-
թյունները: Կարմիր բանակը Վարչավայ-
տակ: Վարչավայից մեր նահանջելու պատ-
ճառները (դորամասերի հոգնածությունը)
նվաճած դիրքերի վոչ բավականաչափ ամ-
րացումը, թիկունքի աշխատանքների ան-
մարունակությունը, պահեստների անմար-
տունակությունը, ավերվածությունը յեր-
կրում, լեհական բուրժուազիայի կողմից
մանր-բուրժուազիայի զորահալաքը շովե-
նիստական լոզոնդներով, ոգնելու Լեհաս-
տանի իմպերիալիստներին): Լեհաստանը,
չնայած Թրանսիայի հախանեղգործության,
ստիպված է լինում հաշտություն կնքել մեղ-
հատ և հրաժարվել իր հաղթանակողական
պահանջներից:

Անգլո-Ֆրանսիական իմպերիալիզմի
զործակար— «գեներալական տաշտաքե-
լանք»— Վրանդելը: Կարմիր բանակի պայ-
քարը Վրանդելի դեմ: Ընկ. Թրունդեն— դե-
կավարն եր վրանդելյան ճակատի ուսերա-
ցիաների: Պերեկոսլը և Սիվաչը: Վրանդելի
լիկվիդացիան: «Կարմիր բանակի պատմու-

թյան ամենափայլուն եջերից մեկն է հան-
դիսանում այն լիովին վճռական և հիանա-
լիորեն արագ հաղթանակը, վորը մենք տա-
րանք Վրանդելի նկատմամբ» (Լենին):

5. Ինտերվենցիայի վերջնական ջախջա-
խումը ծայրամասերում (Կովկաս, Հեռավոր
Արևելք) և Խորհրդային իշխանության
հաստատումն այնտեղ:

Կարմիր բանակի պայքարը բանդիտիզմի
դեմ: Բանդիտիզմի դասակարգային կուլտ-
կային ելությունը, իմպերիալիզմի աջակ-
ցությունը բանդիտիզմին: Լեհաստանի,
Ռումինիայի և Ֆինլանդիայի աջակցությունը
բանդիտիզմին: Կրոնչտատդի ապստամբու-
թյունը, Տամբովյան ապստամբությունը:
Մախնովչինա: Սպիտակ-Փիննական ավան-
տյուրան Կարելիում:

ԿԿԻ ոգնությունն Անդրկովկասի աշխա-
տավորությանը, Խորհրդային իշխանու-
թյան համար նրանց մղած պայքարում:
(Վրացական մենչևիկներին, դաշնակների և
մուսավաթիստների դիրքը Հոկտեմբերյան
Հեղափոխությունից հետո: Բազմի կոմու-
նայի անկումը՝ Անդրկովկասյան հակահե-
ղափոխության և ինտերվենտների հարված-
ների տակ. աշխատավորության դրուժյու-
նը բուրժուա-դեմոկրատական հանրապե-
տությունների դոյության ժամանակ Ան-

դերկովկասում: Անդրկովկասի աշխատավորության պայքարը խորհրդային իշխանության համար. կից՝ ողջութունն այդ պայքարում):

Ռազմական կոմունիզմի քաղաքականութունից ՆԵՊ-ին անցնելը:

6. Ինչու մենք հաղթեցինք: Մեր թե՛ նախնիների բնութագրերը: «Յերեք տարի շատե՛ս աշխատեցինք աշխարհի բոլոր ամենահարուստ յերկրները» (Լենին): Սակայն իմաստով զվարդիականություն չկարողացանք դառնալ: Նրան ոժանդակություն ցույց տալն իմպերիալիստների կողմից, վորպես պատճառ քաղաքացիական կռիվների յերկարատև բնույթի և ներքին հակահեղափոխության յերկար զիմադրության: Այն ամենածանր պայմանները, վորոնցում վորհրդային իշխանությունն ու կարմիր բանակը:

Քաղաքացիական պատերազմների դասակարգային բնույթը: Որը—իմպերիալիստական բնույթն այն պատերազմի, վորը մղում է յին իմպերալիստներն ու նրանց վարձկանները խորհրդային հանրապետության դեմ: Հեղափոխական-դասակարգային բնույթն այն պատերազմի, վորը մղում էր խորհրդային հանրապետություն իմպերիալիզմի դեմ: Մեր պատրազմը «չարունակու-

թյունն էր հեղափոխական քաղաքականության, չահագործողներին, կալվածատերերին ու կապիտալիստներին տապալելու քաղաքականություն» (Լենին):

